

Բանկի հաշվարկային տոկոսադրույք

Բանկի հաշվարկային տոկոսադրույք	
ՀՀ դրամ (ուժի մեջ է 1 Ապրիլի, 2009)	10.5%
ԱՄՆ դոլար (ուժի մեջ է 10 Նոյեմբերի, 2008)	8.75%
Եվրո (ուժի մեջ է 22 Ապրիլի, 2009)	7.00%

ՀՀ դրամով Հաշվարկային դրույքը հավասար է՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման (Ռեպո) տոկոսադրույքին գումարած ֆիքսված մարժա: Ռեպո տոկոսադրույքը մշտապես հրապարակվում է ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային էջում. <http://www.cba.am>

ՀՀ դրամով հաշվարկային դրույքը ենթակա է փոփոխման՝ Ռեպո տոկոսադրույքի տարեկան 2%-ով տատանման դեպքում (բարձրացման կամ նվազման)՝ սկսած Բանկի կողմից ՀՀ դրամով հաշվարկային դրույքի վերջին վերանայման օրվանից: Ռեպո տոկոսադրույքի մինչև տարեկան 2%-ով տատանման դեպքում՝ Բանկը իր հայեցողությամբ իրավունք ունի փոփոխել ՀՀ դրամով հաշվարկային դրույքը: Ռեպո տոկոսադրույքին գումարվող ֆիքսված մարժան կարող է ցանկացած ժամանակ փոփոխվել Բանկի հայեցողությամբ՝ տեղական կամ միջազգային շուկայի փոփոխությունները արտացոլելու նպատակով:

ՀՀ դրամով հաշվարկային դրույքի վերջին վերանայման օրը՝ 18 փետրվարի 2009թ.

Ուժի մեջ է՝
1 ապրիլի, 2009

ԱՄՆ դոլարով հաշվարկային դրույքը հավասար է՝ ԱՄՆ Ֆեդերալ Ռեզերվի (ԱՄՆ Կենրոնական բանկի) կողմից սահմանվող տոկոսադրույքին գումարած ֆիքսված մարժա: Ֆեդերալ Ռեզերվի տոկոսադրույքը մշտապես հրապարակվում է Ֆեդերալ Ռեզերվի ինտերնետային էջում.
www.federalreserve.gov/fomc/fundsrate.htm

ԱՄՆ դոլարով հաշվարկային դրույքը ենթակա է փոփոխման՝ ԱՄՆ Ֆեդերալ Ռեզերվի տոկոսադրույքի տարեկան 2%-ով տատանման դեպքում (բարձրացման կամ նվազման)՝ սկսած Բանկի կողմից ԱՄՆ դոլարով հաշվարկային դրույքի վերջին վերանայման օրվանից: ԱՄՆ Ֆեդերալ Ռեզերվի տոկոսադրույքի մինչև տարեկան 2%-ով տատանման դեպքում՝ Բանկը իր հայեցողությամբ իրավունք ունի փոփոխել ԱՄՆ դոլարով հաշվարկային դրույքը: Ֆեդերալ Ռեզերվի տոկոսադրույքին գումարվող ֆիքսված մարժան կարող է ցանկացած ժամանակ փոփոխվել Բանկի հայեցողությամբ՝ տեղական կամ միջազգային շուկայի փոփոխությունները արտացոլելու նպատակով:

ԱՄՆ դոլարով հաշվարկային դրույքի վերջին վերանայման օրը՝ 30 սեպտեմբերի, 2008թ.

Ուժի մեջ է՝
10 նոյեմբերի, 2008թ.

Եվրոյով հաշվարկային դրույքը հավասար է՝ Եվրոպական Կենրոնական բանկի կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքին գումարած ֆիքսված մարժա: Եվրոպական Կենրոնական բանկի կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը մշտապես հրապարակվում է Եվրոպական Կենրոնական բանկի ինտերնետային էջում. <http://www.ecb.int/home/html/index.en.html>.

Եվրոյով հաշվարկային դրույքը ենթակա է փոփոխման՝ Եվրոպական Կենրոնական բանկի կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի տարեկան 2%-ով տատանման դեպքում (բարձրացման կամ նվազման)՝ սկսած Բանկի կողմից Եվրոյով հաշվարկային դրույքի վերջին վերանայման օրվանից: Եվրոպական Կենրոնական բանկի կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի մինչև տարեկան 2%-ով տատանման դեպքում՝ Բանկը իր հայեցողությամբ իրավունք ունի փոփոխել Եվրոյով հաշվարկային դրույքը: Եվրոպական Կենրոնական բանկի կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքին գումարվող ֆիքսված մարժան կարող է ցանկացած ժամանակ փոփոխվել Բանկի հայեցողությամբ՝ տեղական կամ միջազգային շուկայի փոփոխությունները արտացոլելու նպատակով:

Եվրոյով հաշվարկային դրույքի վերջին վերանայման օրը՝ 21 ապրիլի 2009թ.

Ուժի մեջ է՝
22 ապրիլի 2009թ.

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի հաճախորդներին ուղղված տեղեկացում ՀՀ դրամով հաշվարկային դրույքի վերաբերյալ

Ուժի մեջ է՝ 01 ապրիլի 2009թ.

2009 թվականի փետրվարի 18-ին Հայաստանյան շուկայում առկա իրավիճակի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն որոշում է կայացրել կիրառել ՀՀ դրամով հաշվարկային դրույքը վերանայելու իր իրավունքը:

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն որոշում է կայացրել կիրառել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված Ռեպո տոկոսադրույքի նկատմամբ ֆիքսված մարժան փոփոխելու իր իրավունքը՝ հիմք ընդունելով հետևյալ գործոնները.

- Հայաստանյան շուկայում գործող տոկոսադրույքների վերլուծությունը ցույց տվեց, որ շուկայում առկա է ՀՀ դրամով տոկոսադրույքների բարձրացման միտում, անկախ Ռեպո տոկոսադրույքի վերջերս կատարված իջեցումների:
- Վերջին 12 ամիսների ընթացքում Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն մի քանի անգամ բարձրացրել է ՀՀ դրամով ժամկետային ավանդների տոկոսադրույքները: Ընդհանուր առմամբ, ՀՀ դրամով ժամկետային ավանդների միջին տոկոսադրույքը բարձրացել է տարեկան 4.75%-ով:
- Ներկայիս տնտեսական իրավիճակի հետևանքով զգալիորեն աճել է վարկային ռիսկը:

Վերը նշված նկատառումներով, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն որոշում է կայացրել ՀՀ դրամով հաշվարկային դրույքը բարձրացնել տարեկան 1.25%-ով՝ Ռեպո տոկոսադրույքի նկատմամբ ֆիքսված մարժան ավելացնելով մինչև տարեկան 3.75%-ով, և նվազեցնելով ՀՀ դրամով հաշվարկային դրույքի հաշվարկում Ռեպո տոկոսադրույքը՝ մինչև տարեկան 6.75%:

Հետևաբար՝ ՀՀ դրամով հաշվարկային դրույքը 2009թ. ապրիլի 1-ից կսահմանվի տարեկան 10.50 %-ի չափով: